539 Սիրո կյանքի մեջ տերունական

1. Սիրո կյանքի մեջ տերունական
Կըլլաս Իր խնամքին դուն առարկան:
Տառապանքի մեջ, թե նեղության
Անհատ աղբյուր է քո զորության:
Թե փոթորիկ իսկ շուրջդ լինի,
Ու փորձությունը քեզ վտանգի,
Սիրո կյանքի մեջ տերունական
Կըլլաս Իր խնամքին դուն առարկան:
Տառապանքի մեջ, թե նեղության
Անհատ աղբյուրն է քո զորության:

2. Սիրո կյանքի մեջ տերունական
Հույսովն Իր լի է քո ապագան:
Թուխ ամպերուն մեջ հուսալքման
Աստղերն Իր շնորհքին կշողշողան:
Բարեկամության հիմն իսկ խախտի,
Թե վստահության կայծը մարի,
Սիրո կյանքի մեջ տերունական
Կըլլաս Իր խնամքին դուն առարկան:
Թուխ ամպերի մեջ հուսալքման
Աստղերն Իր շնորհքին կշողշողան:

3. Սիրո կյանքի մեջ տերունական
Կփնտրես կամքը Իր պատվական:
Թե կյանքդ ըլլա աստանդական,
Միակ ուղղիչն է Իր Սուրբ Մատյան՝
Ազատության քո խղճի, մտքի,
Կրելու պսակը փառաց կյանքի:
Սիրո կյանքի մեջ տերունական
Կըլլաս Իր խնամքին դու առարկան:
Թե կյանքդ ըլլա աստանդական,
Միակ ուղղիչն է Իր Սուրբ Մատյան: